ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 88-Լ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿՐԿՆՄԱՆ ԿԱՄ ՇԱՐՈՒՆԱԿՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել ընտանեկան և կենցաղային բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության պետին:

3. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ 13.12.2024թ.

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի

« 13» 12. 2024թ.

Թիվ 88 - Լ հրամանի

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿՐԿՆՄԱՆ ԿԱՄ ՇԱՐՈՒՆԱԿՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանման ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազորություն ունեցող ծառայողի (այսուհետ՝ իրավասու ծառայող) կողմից ընտանեկան և կենցաղային բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման (այսուհետ՝ անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատում) չափորոշիչները և դրանց կիրառման առանձնահատկությունները:

2. Իրավասու ծառայողն անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատումն իրականացնում է հետևյալ չափորոշիչների հիման վրա.

1) գործադրված ընտանեկան և կենցաղային բռնության տեսակը և բնույթը.

2) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից երեխաների ներկայությամբ բռնություն գործադրելը.

3) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի տիրապետության տակ զենքի առկայությունը և դրա գտնվելու վայրը.

4) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից սպառնալիքներ հնչեցնելը և նրա վարքագիծն ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի նկատմամբ.

5) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի և նրա խնամքի տակ գտնվող անձանց մարմնի և հագուստի վրա առերևույթ բռնության հետքերը.

6) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի ընտանիքի անդամների վարքագիծը ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի նկատմամբ.

7) հասցված վնասվածքների նկարագրությունը (որքանով դա հնարավոր է անել առանց փորձաքննության), քանակը, տեղակայումը և գործիքները (միջոցները), որոնք օգտագործվել են վնասվածքները հասցնելու համար.

8) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի և նրա խնամքի տակ գտնվող անձանց վարքագիծը և ինքնազգացողությունը, այդ թվում՝ վախը, շնչելու և կուլ տալու դժվարությունը, դողը, շարժումների անհավասարակշռությունը.

9) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի դեմ նախկինում ներկայացված բողոքները և հաղորդումները.

10) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած և ենթադրաբար բռնության ենթարկված անձանց հարաբերությունների բնույթը, վեճերի, այդ թվում՝ ամուսնալուծության կամ երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված վեճի առկայությունը, որոնց վերաբերյալ գործերը քննվում են դատական կարգով.

11)ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձին պատկանող գույքին պատճառված վնասը.

12) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի՝ անչափահաս, հղի կամ տարեց լինելը կամ հաշմանդամություն ունենալը կամ այլ հատկանիշներ, որոնք նրան հատկապես խոցելի են դարձնում.

13) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի՝ բռնությամբ զուգորդված հանցանքի համար չմարված և չվերացված դատվածություն ունենալը, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված լինելը և փորձաշրջանի մեջ գտնվելը.

14) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ նախկինում պաշտպանության միջոց (նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում) կիրառված լինելը, այդ թվում՝ ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի կողմից պաշտպանության միջոցի պահանջների կատարմանը խոչընդոտելու պատճառով օրենքով սահմանված դեպքում պաշտպանության միջոցի կիրառման մասին որոշման վերացված լինելը:

3. Սույն հավելվածի 2-րդ կետով նախատեսված չափորոշիչների հիման վրա անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատումն իրականացվում է հետևյալ գործողությունների կատարման արդյունքում՝

1) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի հետ լսումը.

2) եթե ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձը դեպքի վայրում է, ապա նրա լսումը.

3) դեպքի վայրում ներկա այլ անձանց լսումները.

4)Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի անվամբ զենք հաշվառված լինելու փաստը ստուգելը.

5)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ գործողություններ:

4. Սույն հավելվածի 1-ին մասով նախատեսված լսման ընթացքում գնահատումը 16 տարին լրացած անձանց դեպքում իրականացվում է հարցաթերթի միջոցով՝ ըստ Ձևի:

5. Ձևով սահմանված աղյուսակի 1-5-րդ կետերով նախատեսված հարցերից առնվազն 3-ին դրական պատասխանը վկայում է անմիջականորեն սպառնացող վտանգի առկայության մասին:

6. Սույն հավելվածի 5-րդ կետով չնախատեսված դեպքում իրավասու ծառայողը կարող է արձանագրել անմիջականորեն սպառնացող վտանգի առկայությունն ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի կողմից Ձևով սահմանված աղյուսակով նախատեսված հարցերից առնվազն 10-ին դրական պատասխան տալու դեպքում:

7. Սույն հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված լսումների ընթացքում իրավասու ծառայողն անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման նպատակով կարող է ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին տալ հետևյալ հարցերը.

1) արդյոք նա գործադրել է բռնություն.

2)սույն կետի 1-ին ենթակետին «այո» պատասխանելու դեպքում՝ որոնք են բռնություն գործադրելու պատճառը և հանգամանքները.

3) սույն կետի 1-ին ենթակետին «ոչ» պատասխանելու դեպքում՝ ինչպես է բացատրում ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի մարմնի և հագուստի վրա և դեպքի վայրում առկա բռնության հետքերը (եթե այդպիսիք առկա են).

4) արդյոք հնչեցրել է սպառնալիքներ կամ ունեցել է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձին վնասելու մտադրություն.

5) արդյոք ընդունում է, որ իր գործողություններով վնաս է հասցրել կամ անհանգստություն է պատճառել ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձին.

6) արդյոք նրա նկատմամբ երբևէ կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, կամ նա դատապարտվել է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելու համար.

7) արդյոք նա հաշվառման է վերցվել ընտանեկան և կենցաղային բռնություն կատարելու համար.

8) ինչպիսի հարաբերությունների մեջ է ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի հետ, արդյոք նրանց միջև առկա է որևէ վեճ, որի վերաբերյալ գործը քննվում է դատական կարգով.

9) արդյոք նրա տիրապետության տակ առկա է զենք:

8. Եթե ենթադրաբար գործադրվել է փոխադարձ բռնություն, իրավասու ծառայողն անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման նպատակով որոշում է, թե՝

1) կողմերից որ մեկն է գործել պաշտպանության վիճակում.

2) որ կողմն է հանդիսացել դոմինանտ.

3)ում կողմից է հետևողականորեն բռնություն կիրառվել կամ սպառնալից վարքագիծ դրսևորվել.

4) ում կողմից է բռնությունը շարունակելու կամ կրկնելու հավանականությունն ավելի բարձր՝ ելնելով յուրաքանչյուրի վնասվածքների բնույթից, քանակից, տեղակայումից, օգտագործված գործիքներից և միջոցներից, ինչպես նաև գործադրված ընտանեկան և կենցաղային բռնության այլ տեսակների առկայությունից:

2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

9. Անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատումը ձևակերպվում է անհետաձգելի միջամտության որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ, որում նշվում են՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանման լրիվ անվանումը.

2) որոշման անվանումը, դրա ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը.

3) դեպքի վայրի հասցեն.

4) հաղորդման վերաբերյալ տեղեկությունները.

5) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած և ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված, ինչպես նաև դեպքի վայրում ներկա այլ անձանց անունը, ազգանունը, հայրանունը, բնակության և հաշվառման հասցեները.

6) որոշումը կազմող իրավասու ծառայողի անունը, ազգանունը, հայրանունը, կոչումը, պաշտոնը.

7) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի կողմից սպառնացող վտանգի գնահատման ամփոփումը՝

ա. ըստ սույն հավելվածի Ձևով նախատեսված հարցաթերթի, եթե ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը 16 տարին լրացած անձ է.

բ. ըստ սույն հավելվածով նախատեսված չափորոշիչների վերաբերյալ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի հայտնած տեղեկատվության, եթե վերջինս 16 տարին չլրացած անձ է.

8) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձին պատճառված վնասի, նրա վարքագծի և խոցելիությունը բնութագրող (արդյոք վախեցած է, լացում է և այլն) հատկանիշների նկարագրությունը.

9) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի վարքագծի նկարագրությունը (արդյոք ագրեսիվ է, սպառնալիքներ կամ հայհոյանքներ հնչեցնում է և այլն) և անձը բնութագրող հատկանիշների արձանագրումը.

10) ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված և ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց միջև հարաբերությունների նկարագրությունը.

11) դեպքի վայրում բռնության հետքերի և գույքին պատճառված վնասի նկարագրությունը:

12) «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները և դրանց գործողության ժամկետները.

13) որոշման բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին որոշումը կարող է բողոքարկվել, ինչպես նաև որոշումը խախտելու համար օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները:

10. Որոշումը ստորագրում է այն կայացրած իրավասու ծառայողը: Մասնակիցները ևս ստորագրում են որոշման տակ, իսկ անչափահաս և անգործունակ անձանց փոխարեն ստորագրում են նրանց օրինական ներկայացուցիչները, եթե վերջիններս ներկա են որոշման կայացման պահին, բացառությամբ այն դեպքի, եթե որոշման կայացման պահին ներկա է միայն անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած օրինական ներկայացուցիչը: Եթե ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձը դեպքի վայրում ներկա չէ, այդ մասին որոշման մեջ կատարվում է համապատասխան նշում: Եթե մասնակիցները հրաժարվում են ստորագրել, այդ մասին կատարվում է համապատասխան գրառում: Որոշումը ստորագրելուց հրաժարվող անձին պետք է հնարավորություն տրվի բացատրելու հրաժարման պատճառները կամ պատճառները բացատրելուց հրաժարվելը, ինչի մասին նույնպես գրառում է կատարվում:

11. Եթե իրավասու ծառայողը, սույն հավելվածով նախատեսված չափորոշիչների գնահատման արդյունքում հանգում է եզրակացության, որ ընտանեկան և կենցաղային բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգը բացակայում է, այդ մասին կազմում է արձանագրություն:

Հարցաթերթ

Ընտանեկան և կենցաղային բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչների վերաբերյալ

«____» _____ 20 թ. _____

/կատարման վայրը /

_____

/ոստիկանության իրավասու ծառայողի պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը/

_____

Ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի անձնական տվյալներ՝

Անունը, ազգանունը, հայրանունը _____

Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը _____

Կրթությունը _____

Ընտանեկան դրությունը _____

Աշխատանքի վայրը _____

Գրանցման և բնակության փաստացի վայրերի հասցեն և հեռախոսահամարները _____

_____

2. Ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձին ուղղվում են հետևյալ հարցերը (անհրաժեշտության դեպքում թարգմանչի օգնությամբ)՝

Հարցը	Պատասխանը				
	Այո	Ոչ	Տեղյակ չեմ	Հրաժարվում եմ պատասխանել	Վերաբերելի չէ
1. Արդյո՞ք Դուք վախենում եք, որ ենթադրաբար բռնություն գործադրած անձը կվնասի Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց:					
2. Ենթադրաբար բռնություն գործադրած անձը սպառնացե՞լ է վնասել Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց:					
3. Ձեր կարծիքով՝ ենթադրաբար բռնություն գործադրած անձն ունա՞կ է սպանելու կամ վնաս հասցնելու Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց:					

4. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը սպառնացել է Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց՝ գործածելով զենք (դանակ կամ այլ առարկա):					
5. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբևէ Ձեր նկատմամբ ֆիզիկական բռնություն է գործադրել կամ փորձել է խեղդել կամ շնչահեղձ անել Ձեզ:					
6. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը Ձեզ հետամտել է՝ հետապնդել է կամ առցանց հարթակների միջոցով պարբերաբար Ձեր կամքին հակառակ Ձեզ հետ կապ է հաստատել կամ անհարկի այցելել է աշխատանքի, ուսման կամ զբաղմունքի վայր:					
7. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործածած անձը վերահսկողություն է իրականացրել Ձեր առօրյա գործողությունների նկատմամբ (օրինակ՝ սահմանափակել Ձեր ընտանիքի անդամների կամ ընկերների հետ հաղորդակցությունը, արգելել Ձեզ աշխատել կամ վարել մեքենա և այլն):					
8. Ենթադրաբար բռնություն գործադրած անձը Ձեզ երբևէ ստիպե՞լ է կամ սպառնացե՞լ է Ձեր կամքին հակառակ սեռական հարաբերություն ունենալ իր հետ կամ երբևէ Ձեր կամքին հակառակ կիրառե՞լ է ֆիզիկական բռնություն սեռական հարաբերության ընթացքում:					
9. Արդյո՞ք Դուք հղի եք կամ ծննդաբերել եք վերջին մեկ տարվա ընթացքում կամ ունե՞ք հաշմանդամություն:					
10. Ենթադրաբար բռնություն գործադրած անձը Ձեր հղիության ընթացքում (եթե նա տեղյակ էր հղիության մասին) երբևէ գործադրե՞լ է բռնություն:					

11.Ենթադրաբար բռնություն գործադրած անձից Դուք վերջին մեկ տարվա ընթացքում փորձե՞լ եք ամուսնալուծվել կամ բաժանվել (այդ թվում՝ համատեղ բնակության վայրը լքել) կամ Ձեր միջև արդյո՞ք կա երեխաների խնամակալության հետ կապված դատական կարգով քննվող վեճ:					
12. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձի ընտանիքի անդամները երբևէ սպառնացել են Ձեզ կամ հոգեբանական(օրինակ՝ ճնշել, պարբերաբար նվաստացրել և այլն) կամ ֆիզիկական բռնության են ենթարկել:					
13. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը զրկել է Ձեզ ֆինանսական միջոցներից կամ Ձեր կամքին հակառակ ներգրավել է վարկային կամ ֆինանսական գործարքներում:					
14. Արդյո՞ք երբևէ Ձեր նկատմամբ բռնությունը դրսևորվել է Ձեր երեխաների ներկայությամբ :					
15.Ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբևէ դաժանաբար վարվե՞լ է Ձեր ընտանի կենդանու նկատմամբ:					
16. Ենթադրաբար բռնություն գործադրած անձի տիրապետության տակ արդյո՞ք առկա է զենք:					
17.Ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբևէ սպառնացե՞լ է, որ ինքնասպան կլինի կամ փորձե՞լ է ինքնասպան լինել:					
18. Դուք վնասվածք ստացե՞լ եք ներկա դեպքի պատճառով:					
19. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձի նկատմամբ երբևէ կայացվել է ընտանեկան և կենցաղային բռնության համար նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում կամ նա դատապարտվել է ընտանեկան կամ կենցաղային բռնություն գործադրելու կամ բռնությամբ զուգորդված այլ հանցանք կատարելու համար:					

20.Ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբևէ խախտե՞լ է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումները:					
21. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը հնչեցրել է սպառնալիք Ձեր կողմից ոստիկանություն կամ այլ իրավապահ մարմիններ դիմելու դեպքում:					
22. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը պայմանականորեն վաղաժամկետ ազատվել է պատիժը կրելուց և արդյո՞ք ներկայումս գտնվում է փորձաշրջանում:					

Ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձ

_____ _____

/անուն ազգանուն/ /ստորագրություն/

Ստորագրելուց հրաժարվելու դեպքում՝ այդ մասին նշում և պատճառները՝ _____

_____

ՀՀ ՆԳՆ ոստիկանության իրավասու ծառայող

_____ _____

/անուն ազգանուն/ /ստորագրություն/